

# ООО «ИУГ»



Դ. Տարի, Թիւ 12, Գեղատեմբեր 1, 1930

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻԿ ՀՆԴՅՈՅ ԽՕՎԱՅԻ ԸՆԹԵԸՑ. ԸԿԿ.-ԵԿԿ

Հրատարակելի Գրութիւններ Ղրկել 920 N. Hoyne Ave., Chicago, Ill.

ԳԱԻԹԻ ՕԲԵՐ

Ծնուեսական տագնապը իր ծանր թաթը իջեցաց է ինչպէս բոլոր ժողովուրդներու, նոյնպէս, եւ աւելի, զանազան զալութիւներու մէջ գրանուող հայերու վլայ եւ կը ճիշէ զանոնք անօրինակ սասակութեամբ։

Այս համտուրած տաղնապը թշուառութեան  
մասնած է եւ մէկ օրէն միւսը կտրօս վիճակի են-  
թարկած է այնպիսի անհատներ, որոնք երբեք ար-  
ժանի չեն այսպիսի տիտուր կացութեան մը, որով-  
հետեւ կարող են ու կը փափաքին վաստակիլ եւ ազ-  
նիւ ու կորովի աշխատանքով ճարել իրենց հացը,  
որովհետեւ արժանապատռութեան բարձր գիտակ-  
ցութիւնը թոյլ չի տար իրենց զիջանիլ ու կարեկ-  
ցութիւն հայցել ուրիշներէ՝ նախընտրելով լուռ  
տառապանքը եւ անօթութեան լիումը՝ զթութե-  
նէն;

Այսպիսիներ կան մեր հայրենակիցներուն մէջ,  
չոս ու այլուր, եւ հարկ է որ անոնք մեր խորհուր-  
դին ու աշակեցութեան առարկայ դառնան այս տապ-  
հապալի օրերուն:

Անչուշտ եթէ կարելի ըլլայ այս գթութեան դործ կազմակերպել եւ ընել կեդր. Վարչութեան միջոցաւ, լաւ եւ արդիւնաւոր կ'ըլլայ, ասիկա ասկայն կը վախնանք թէ պատճառ պիտի ըլլայ ձրգ-ձղումներու, մինչ թշուառութիւնը իր աւերը կը զործէ այժմ իսկ խեղճ ու ցրտահար տուներէ ներս՝ արդէն մեցի հետ է խառաւունչ ճմեռու:

Գիտենք նաև մասնաւութեած առողը։  
Գիտենք նաև թէ կեզր. Վարչութիւնը չունի  
լայն միջոցներ հասնելու համար բոլոր կարօտեալ-  
ներուն եւ ընդհուպ պատասխանելու ամէն խընդ-  
րանքի։

Գթութեան այս գործը աւելի արդիւնաւոր կրնայ ըլլալ, եթէ տմէն անհատ, որ բախտաւոր է, կը գործէ ու կրնայ ուրիշին օգնել, լրջօրէն հետաքրքրուի իր չուրջիններուն վիճակով եւ եթէ աննք կարու են օգնութեան, ինք՝ ուրիշներու հետ միասնաբար՝ օգնութեան հասնի եւ թեթեւցնէ անոնց թշուառութիւնը։ Ասիկա մարդասիրական ա-

ւագ պարտականութիւն մըն է, որ պէտք է լիուլի զործագրել այս ծանր տագնապի օրերուն:

Մեր Միութեան մասնաճիւղերն ալ կընան լաւ  
կործ կատարել այս ուղղութեամբ։ Խնչպէս կեղբ։  
Վարչութեան գիւանը կը թելադրէ, մասնաճիւղեր  
կընան այս նպաստակին համար յատուկ ձեռնարկներ  
ընել եւ կարեւոր հասոյթներ գոյացնելով ծառայե-  
ցնել անմիջական պէտքերու։ Մասնաճիւղեր թող  
անմիջական պարտաւորութիւն նկատեն մասնաւոր  
յանձնախումբեր կազմել՝ նպաստի գործին մասին  
խորհրդածելու եւ դրական քայլեր առնելու համար։

Ճկնաժամային պարագաներու համապատասխանող աշխուժութիւն եւ կորովի գործունէութիւնց ցոյց տալ՝ կը նշանակէ սպառազինուած ըլլալ քաղաքակրթութեան տուեալներով եւ ունենալ անբարպատ կենսունակութիւն ու հոգեկան ազնուութիւն։

Թող ոչ ոք չկարծէ թէ, քանի որ ինք այսօր լաւ  
ու բարդաւաճ վիճակ մը ունի, ատիկտ ապահո-  
վուած է ամէն ժամանակներու համար: Ապագան  
ամէն ժամանակներու մէջ եւ ամէն մարդու համար  
եղած է առեղծուած մը՝ յդի անակնկալներով: Ան-  
ցեալին մէջ հարուստները՝ չոր հացի կարօտ դար-  
ձած են բախտի յանկարծական փոխիշութեամբ.  
այսօր ալ մեր աչքին առջեւ շարունակ նոյնն է որ  
կը պատահի, եւ միշտ ալ ասիկա պիտի ըլլայ մար-  
դերու ճակատագիրը: Բարդաւաճութիւն եւ կարօ-  
տութիւն բոլորին համար են, երէկ՝ քուկդ, այսօր՝  
իմո, վաղը՝ ուրիշինը:

Ուստի օգնենք անոնց որ չար բախտէն զար-  
նուած են այսօր եւ կարօտ իմ ու քու կարեկցու-  
թեան եւ դրական օժանդակութեան։ Տա՛նք ուրա-  
խութեամք, տա՛նք առատաձեռնօրէն, տա՛նք յօժա-  
րակամ, վստահ ըլլալով որ մեր այս օդնութիւնը  
ո՛չ միայն պիտի ամոքէ տառապեալներու ցաւերը  
եւ հոգայ անոնց անմիջական պէտքերը, այլ պիտի  
թեթեւցնէ մեր խիղճը։

Ունենալու ուրախութիւնը կը կրկնապատկուի,  
երբ մեր ունեցածին բաժնեկից կ'ընենք անոնք ո-  
րոնք այս կամ այն պատճառով զրկուած են այս աշ-  
խարհի բարիքներէն:

## ԶՆԳՈՒՇԻ ՎԵՐԱՇԽԱՑՄ ՄԻՈՒԹԻՒՆ

Շիքակոյի դատավարութեան վերջացած ըլլալը կը յուսանք որ բարեբախութիւն մը պիտի ըլլայ Միութեան գործերուն համար, քանի որ անոր պատասխանատուները ուղղակի վէրք մը բացած էին մեր Միութեան սրտին վրայ, որ վարակած էր մեր ներքին կեանքը եւ ջաւատած մեր գործունէութիւնը:

Կեդր. Վարչութիւնս կը հաւատայ որ այսքան տատառումներէ վերջ, Միութիւնս այժմ բոնած է շիտակ ճամբան, քանի որ ճգդիտ հասկացողութիւնն ու ներդաշնակութիւնը այժմ ունեէ ժամանակէ աւելի կը տիրեն Միութեան կեանքին ու գործերուն մէջ, եւ կը յառաջանայ ամէն որ քիչ մը աւելի գէպի իր նապատակին: Մենք կը յուսանք թէ մօս է ժամանակը որ ամերիկաբնակ բոլոր Զնդուցցիներ պիտի հաւաքուին Միութեան հովանին տակ, իրենց մաս ու բաժինը բերելու մերաշնական ընդհանուր գործին:

### ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՐԱԳԱՅ ՄԲ

Որքան ալ քիչ ըլլայ զոհողներու թիւը եւ փոքր անոնց նուրիած զումարը, մենք չենք կրնար չճրճուիլ Սան Ֆրանչիսկոյի մեր հայրենակիցներու բարձր ու օրինակելի ընթացքին ի տես, որ վերջերս ցոյց տուած են իրենց առօրեայ խօսակցութեան պահուն եւ չեն մոռցած Զնդուցը ու Միութեան նպատակը, եւ իրենց համեստ նուէրները ըրած են ի նպաստ Հայաստանի մէջ վերաշնուռով նոր Զնդուցին: Այս բարձր ուղին պէտք է օրինակ դառնայ բոլոր Զնդուցցիներու: Բոլորիս ալ պարտականութիւնն է մասնակցիլ հայրենիքի վերաշնական գործին:

### ՕԳՆԵՆՔ ՄԵՐ ԿԱՐՈՏԵԱԼՆԵՐՈՒՆ

Ներկայ տնտեսական տաղնապը եւ աննախլնիաց անդորտութիւնը աղդած է ընդհանուրին: Մեզ հասած նամակներէն կը տեղեկանանք որ թէ հոս եւ թէ արտասահմանի մէջ եղող մեր հայրենակիցներուն մէջ կան օգնութեան կարօտ թշուառներ: Կեդր. Վարչութիւնս իր վերջի ժողովին մէջ նկատի առաւ մեր հայրենակիցներու այս թշուառ կացութիւնը եւ անմիջապէս շրջաբերական հանեց հրահանգելով բոլոր մասնածիւղերուն որպէս զի ի նապաստ մեր կարօտ հայրենակիցներուն անմիջապէս ձեռնարկներ կամ հանդանակութիւններ ընեն իրենց շրջանակին մէջ եւ դոյցած արդիւնքը զրկեն կեդրոն, որպէս զի մեր ներած չափով օգնութեան հասնենք մեր կարօտականիցներուն՝ այս ձմեռուայ ցուրտ եւ գժնդակ եղանակին մէջ:

Մեր պարտքն է որ օգնենք եւ մեղմացնենք մեր հայրենակիցներուն թշուառութիւնը եւ ցոյց տանք թէ իրապէս Զնդուցի վերաշնաց Միութիւնը կազմուած է Զնդուցի եւ բոլոր Զնդուցցիներու յիշատակը յաւերժացնելու եւ կեանքը փրկելու համար:

Ուստի Կեդր. Վարչութիւնս կուգայ խոնարհաբար իր սրտապին կոչը ուղղելու բոլոր Զնդուցի հայրենակիցներու, որ ծնունդի եւ նոր Տարույ իրենց ուրախութեան պահերուն չմոռնան նաև կարօտ Զնդուցցիները: Այս առթիւ մեղի հասած նուէրները, ըլլան մասնածիւղերէ թէ անհատներէ, իրենց անուններով միասին պիտի հրատարակուին «Ծօվառ»ի մէջ:

Կեդր. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ  
Կեդրոնի հասցէն է՝

A. Minasian, 574 17th St., West New York, N. J.

### «ԾՕՎԱՐ»Ի ԲԱՑԱՌԻԿԸ

«Ծօվառ»ի Վարչութիւնը կը ծրագրէ 12 կամ 16 էլ բացառիկ թիւ մը հանել՝ «Ծօվառ»ի հինգերորդ տարեկան ամէն առքիւ:

Եթէ անակնկալ խոչընդուտներ արգելի չըլլան, այս բացառիկ պիտի հրատարակուի յաջորդ մէկ երկու ամիսներ ընթացքին: Վարչութիւնը եւ խմբագրութիւնը ամէն աշխատակիցներէն պիտի բափեն որ այս բացառիկը ըլլայ նոյն եւ ծանի պահուելու ընդմիշտ:

Ամէն հայրենակից ազատ է գրութիւնով մը երեսներ բացառիկին մէջ: Միայն կը խնդրենք որ գրուածները ըստ խնամուլ եւ ամփոփ: Կը խնդրենք մէկ աշխատակիցներէն փութացնեն իրենց գրութիւնները գրկել «Ծօվառ»ի հասցէ ՎԱՐՉՈՒԹԻՒ:

### ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Թերեւս շատ ուշ է, բայց խորհելով որ մեր ակնարիթիւնը կրնայ օգտակար ըլլալ, աւելորդ չենք նկատեն կողմէ ալ քանի մը թելագրաւթիւններ ընել:

Խօսքս «Դրուազներ Զնդուցի Անցեալէն» գրքին մէջ թումաննեանի դրածին մասին է:

Պր. Թումաննեան թուրքի մը կողմէ լսած՝ վերջին աղանութեան մասին տեղեկութիւններ կուտայ, որ գիտի թէ ճիշտ են և թերեւս բան մըն ալ պակաս, միեւնոյն առ կը յիշէ ինքնապաշտպանութեան համար Ծօվառ ապաստող երիտասարդներու պարագան, որ սրտապնդիչ եւ ուրիշալի է մեզ համար. բայց Պր. Թումաննեան անոնց անձները առաջ ըրած է, յիշած է միայն Նորիթիսներ թումաննեանի անունը:

1909ի Կիլիկիոյ դարդին ժամանակ, երբ Զնդուց ալ պարուած էր, Նորիթիսնեան կը ճանչցուէր սրպէս կորիթիտասարդ. արախ ենք որ 1913ի ատեն ալ պարտական թեան գլուխ զանուած է. բայց Պր. Թումաննեան պար նաեւ տալ անունները կուտալ տղայոց: Որովհետեւ որք գէպերը կարեւոր են նոյնքան կարեւոր են գէպերը պատութեան համար: Հետեւարար պիտի խնդրենք Պր. Թումաննեան որ մեզի տայ նաեւ կուտողներուն անունները:

Միեւնոյն գրքին մէջ ուշադրութիւնս գրաւեց ՊՈՅ ՊԵՏՐՈՍԻ պարագան, ուր հեղինակը զայն «Աղլապկու» կոչելով կը վերջացնէ:

Սակայն, ըստ մեր լսածին, Պոռոյ Պետրոս կապավարական ըշջանակի մէջ աղլեցիկ մէկը եղած է, միեւնոյն առ բաջ մարդ, որ նոյն իսկ Եօլաւու խաչօն ըսած է թէ իր յաջորդ միայն Պոռոյ Պետրոսը կրնայ ըլլալ:

Պոռոյ Պետրոսի մահէն յեսոյ նոյն իսկ անոր զամանեան վերը «Աղա» մակրերով կը յորջորջուէին Զնդուցի մէջ, և ի կինը Պոռոյ Մարգրիտ նոյնքան կը յարգուէր թուրք աղանդին եւ պէտքէն, եւ սա բացարձակ իրողութիւն է թէ թուրք պէտքը երբ տեսնէին այս աղնուական կինը՝ ոտքի կը բարեւէին զինքը:

Դժբախտաբար այս աղնուական կինն ալ իր զառն օրեր ունեցաւ՝ արդիւնք տիրող պայմաններուն եւ պարագաներուն. սակայն իր աղնուականութեանէն բան մը չկորոնցուց:

Չենք գիտեր թէ հեղինակը ինչո՞ւ այսպէս թեմեն անցած է. եթէ անոնց վերջի դժբախտութեան եւ կամ յարաւական տարբերութեան պատճառաւ է, սխալ է ատիք:

Սակայն այս պակասութիւններուն հետ միասին Մ. Փուտեանի աշխատավոր պիտի աղանդին վերը գէպէտք պիտի մը ունենայ իր տան մէջ, որպէս դիմում:

բազեկ ըլլայ իր անցեալին եւ եթէ կան վրիպումներ՝ ուղղէ զանոնք իր գիտցածով:

Չնդուշի պատմութեան սրբադրութեան պարտականութիւնը մեր տարէց հայրենակիցներուն վրայ կ'իյնայ բացառապէս, որոնցմէ ոմանք ոոյն իսկ գիտողութիւններ ալ ըրած են, սակայն խուսափած են սրբագրելի:

Այս խուսափումը արդարանալի չէ. անոնք որոնք կը տեսնեն սխալներ, նախանձախնդրութիւնը ունենալու են իրենց գիտցածով ուղղել, Չնդուշի հարազատ պատմութիւնը մէջտեղ բերելու համար:

ԾՕՎԱԽՑԻ

## ՄԵՆՔ ԱԼ ԶՆԳՈՒՇՑԻՆԵՐ ԵՆՔ

«Ծօվառ»ի մէջ կարդացինք Չնդուշի վերը. Միութեան կեդր. Վարչութեան տեղեկագիրներն ու նոր Չնդուշի համար եղած կոչերը, ինչպէս նաև հայրենակիցներու կողմէ գրուած հայրենասիրական յօդուածները, որոնցմով մեզ ալ գիմում կ'ըլլար մեր բաժին պարտականութիւնը կատարելու իրեւ հարազատ Չնդուշցիներ:

Մեր ծննդավայրին յաւերժացումը աւագ պարտականութիւն մք նկատելով՝ մենք Սան Ֆրանչիսկոյի եւ Օքլենդի Չնդուշցիներս ալ քով քովի դալով կաղմեցինք Չնդուշի վերաշինաց մասնաճիւղ մը: Այս կաղմակերպումի օրերուն մեր մէջ ունէինք հայրենակիցներ Աւետիս Տաղտիկեան եւ ծան Աշոտարկեան, Ֆրէզնօէն, որոնք եւս խրախուսեցին ու Միութեան չուրջ համախմբուելու անհրաժեշտութիւնը չեցացին: Այս ժողովին մէջ իսկ դրապէս Միութեան հետ ու անոր աջակցելով նոր Չնդուշի կառուցման մեր հաւատքը ի յայտ բերինք հանողանակութիւնով մը ի նախաստ նոր Չնդուշի կառուցման եւ զումարը 55 տոլար անմիջապէս զրկուեցաւ կեզր. Վարչութեան: Մենք ալ Չնդուշցիներ ենք, ու էինք կրնար հաւաքականութենէն դուրս մնալ: Կը յուսանք թէ այսպէս կը մտածեն նաև Ֆրէզնօի ու Լոս Անձէլսի մեր հայրենակիցներն ալ եւ շուտով իրենք եւս դրապէս կը ցուցնեն իրենց հայրենասիրական խոր զդացումները: Մենք Սան Ֆրանչիսկոյի եւ Օքլենդի Չնդուշցիներս թիւով քիչ ենք, սակայն զիտակցելով մեր կոչումին ու մեր վրայ զրուած յոյներուն իրականացման՝ պիտի ձկուինք մեր բոլոր կարելի միջոցներով օգտակար ըլլալ Միութեան:

Սան Ֆրանչիսկոյին՝ ԱԽԵՑԻՍ ՓԻԼՕԵԱՆ  
ՕՔԼԵՆԴԻՆ՝ ՄԱՆՈՒԿ ՊՈՅԱՃԵԱՆ

Ի ՆՊԱՏ ՆՈՐ ԶՆԳՈՒՇԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ՑԱՆԿ	
Աւետիս Փիլօւան	10.00
Կիրակոս Տէր Ստեփանեան	10.00
Սանուկ Պօյանեան	10.00
Պօղոս Պօյաճեան	10.00
Մարտիրոս Փափաճեան	10.00
Ճան Պապակեան	5.00

Դաւար	
Կեղը. Վարչութիւնը վալանս, Ֆրանսայէն, հայրենակիցներ Յակոբ եւ Աւետիս կ. Թուրոյեաններէ ստացած է 100 ֆրանք (չորս տոլար) ի նախաստ նոր Չնդուշ թաղամասին:	55.00

### ԾԻԾԱՂԻ ՀԱՄԱՐ

Գօչօ. — (Ժողովին մէջ) Պր. ատենապետ, կրնա՞մ հանդա՞լ Պր. Յակոբեանէ թէ «մի գուցէ» ինչ բոել է:

Յակոբեան. — «Պիլքի»:  
Գօչօ. — Ես ալ գիտցայ թէ բան մրն է. պատուի լեզուն չպուցեն ծօ՛:

## ԽՆԴՐԱՆՔ ՄԸ

Յարդելի հայրենակիցներ,

Սոյն երկտողովս կը փափաքիմ դիմել ձեր ազնիւ սրտին եւ գթութեան:

Այսօր տարի մը կ'ընէ որ Քուպա եմ. ճամբայ ելայ զաւակներուս մօտ գլու համար. ցաւալի է ըսել թէ անյաջողութեան հանդիսացայ Քուպայի կառավարական խիստ օրէնքներուն բերմամբ եւ կորուսու ունենալով մնացի հու Վերջապէս բանար չփառեցաւ ինծի եւ չկրցայ փափաքիս գոհացում գոնել: Այժմ պիտի ինպրէ ձեզմէ որ ճամբառ ծախս մը զրկէ ինծի քրէ ինչէ որ կրէ ինչի է ամսթու ծախս մը զրկէ ինչի, որ կրէ ինչի վերադասամ Ֆրանսաս: Հոն գոնէ զարծ կայ, կ'աշխատիմ եւ օրապահիկս կը ճարեմ: Պիտի ըսէք թէ երեք զաւակներ եւ աղջիկ ու փեսայ ունիս, ինչո՞ւ անոնք չին օգներ: Դժբախտարար անոնք ալ անկարող են, եթէ կարենային օգնութիւն մը հասցնել՝ արդէն մինչեւ հիմա կ'ընէին: Այսօր տարի մըն է որ հօրեղօրորդիներուս բոլ եմ, անոնք կը նային ինծի, սակայն անոնք ալ բազմանդամ ընտանիք մը կը կազմէն եւ հաղիւ օրապահիկ մը կրնան ձարել ու չեն կրնար բան մը ընել: Ի՞նչ ընեն՝ դործերը չատ թոյլ:

Եթէ բարի ըլլաք ու օգնէք ինծի՝ շատ չնորհակալ պիտի ըլլամ եւ երախտապարտ ու աղօթող:

Մասմ ձերգ յարգանոք

ՄԱՐԹԱ. Պ. ԴԱՒԻԹԵԱՆ

## Ի՞ՆՉ Է ՄԵՐ ՊԱՐՏՔԸ

Նոր Չնդուշը, վաղուան սերունդին այդ փաւաւուր յուշարձանը, որ մօտիկ ապագային պիտի կանգնի Հայաստանի որտին վրայ եւ Արարատի շուքին տակ, վկան պիտի ըլլայ բոլոր հայրենասէր Չնդուշցիներու նուիրման տինչին, զո՞հաբերութեան ողիին եւ հայասիրութեան սիրալի գործին:

Հայաստանը, որուն հողը ամբողջութիւնն է մեր պահապերու փշուած ու փոշիացած գանկերուն եւ որուն ծոցէն ծլած կարմիր ու դիւթիչ նավորունիները հրայրքու տենչերն ու սիրապել իղձերն են մեր վաղամեռիկ բանաստեղծներուն, իրեն պիտի քաշէր ու զուկէր բոլորիս հայրենաբաղ հողիները:

Մեր հայրենասիրական պարտքը՝ նոր Չնդուշի վերականումն ու անոր վերստին յարութիւնն է Հայաստանի յուոթի հողին վրայ:

Հայաստանին առնք մեր որդիական պարտքը, որպէս զիտրամանի ըլլանք անոր մայրական քնքրտւ ու քաղցր խանդապահութիւններ:

Օ՞ն ուրեմն, այս է մեր պարտքը. դործենք առանց վարանումի, մեծ կը սպասէ մեծ յաղթութիւնը, դործենք անդուլ եւ անվարան:

ԱԽԵ Շամօ, Ֆրանսա

## ԱԶՔԸ ԼՈՅՍ ՇԻՔԱԿՈՅԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒ

Ուրախութեամբ կը ծանուցանեմ բոլոր հայրենակիցներու, թէ կը պահեմ հայկական նպարեղէններ, ընտիր մանր եւ խոշոր պլղուր, եփուն կարմիր սալ եւ սիսեռ, առլամա, պամիսա, շոր սոխ, կծու եւ քաղցր թուրչու, պաստրմա: Կը պահէն նաև անուշեղէններ Ծնունդի համար — լոգում, փաղլալա, զուրանպիս, տնիք եւ աղի լէպլէսի եւ շաքարով նուշ:

Կը ծախսմ շատ չափաւոր կներով: Դիմել՝ Խ. ՊԱՊԱ. ԱԼԼԵՆ, 1119 W. Erie St., Շիքսի:

## ԶՆԳՈՒՇՑԻՆԵՐՈՒԻ ԿԵԱՆՔՆ

**ՇԵԲԱԿՈ — Պրն.** Յակոբ Ա. Ապուղիքեանի ամուսնութիւնը Տիկին Պայծառի հետ, աեղի ունեցաւ Նոյեմբեր 19ին կնքահօր Տէր և Տիկին Յ. Մ. Ապուղիքեանի բնակարանին մէջ՝ իրենց շատ մօտիկ ազգականներու ներկայութեան։ Պահի սուրբ խորհուրդը կատարեց Արժ. Տէր Վահան քհնյ. Կիւլտական։

Երջանիկ կեանք և երկար կենակցութիւն կը մաղթենք Մէր երկու հայրենակիցներուն։ Շնորհաւորական հեռագիր եւ նուէրներ եկած էին Տէր և Տիկին Գ. Յովսէփեանի կողմէ։

\*\*\* Մէր պատուական հայրենակից Պրն. Խ. Պոռօհան ժամանակէ մը ի վեր է որ սոքի ցաւով կը տառապի. ցաւը իր առաջուան աստիկութիւնը կորսնցուցած է թէւ, բայց դռու կ'արգիլէ զինքը զործին կանոնաւոր կերպով նայելէ։ Հաստարեալ առաքինում կը մաղթենք։

\*\*\* Պրնք. Յարութիւն և Աւետիս Գույումձեան եղայրներ քաղաքիս մեկնեցան Պոռթըն՝ հաւանաբար հոն հաստատելու հոմար, յաջողութիւն կը մաղթենք։

\*\*\* Մէր պատուական հայրենակիցը Պրն. Ա. Տաղակեան ժամանակէ մը ի վեր անհանդիս ըլլալով նշաղեղձեռու զործողութեան ենթարկուեցաւ և այժմ տուն կը մնայ։ Կատարեալ ապաքինում կը մաղթենք։

\*\*\* Տէր և Տիկին Կ. Գույումձեանի ասն տակի դեղաբանէն չըդեհ ծաղկցու զիշեր տանին, մէր հայրենակիցները հաղիւ կրցան ինքինքնին դոնէն զուրս նետել կիսամերկ վիճակի մէջ։ Բարեկախտաբար հշէներ չուտ հասան եւ ազատեցին զանոնք ծանր կորուստէ։ Այդ զիշեր իրենց տունը անբնակելի զանալով զիշերեցին իրենց կնքահօր Պրն. Ղարաբար Վարդանեանի տունը։

\*\*\* Պրն. Յ. Փապումձեան շարթուան մը այցելութիւն տուաւ Միլվօքի բնակող իր բարեկամներուն և Տէրին վերադաւ քաղաքու։

\*\*\* Պրն. Էյնո Փափաճեան մեկնեցաւ Ֆիլատէլֆիս իր եղբօր մօտ՝ հաւանաբար հոն հաստատուելու համար։ Յաջողութիւն կը մաղթենք։

\*\*\* Տէր և Տիկին Յ. Վարդանեանի փոքրիկին մկրտութիւնը աեղի ունեցաւ քաղաքիս Սբ. Գրիգոր Լուսաւորիէ եկեղեցւոյ մէջ, կնքահայրութեամբ Պրն. Յ. Աղնաւորեանի։ Մկրտութեան արարողութիւնը կատարեց Արժ. Տէր Վահան քհնյ. Կիւլտական։ Մէր խնդակցութիւնը կը յայտնենք Տէր և Տիկին Վարդանեանի եւ բոլոր ազգական բարեկամներու։

\*\*\* Միլվօքի մէր հայրենակիցներէն Տէր և Տիկին Կ. Տէր Ստեփանեան մանչ զաւակ մը ունեցան։ Մէր խնդակցութիւնը կը յայտնենք։

### ԼՐԱՏՈՒ

**ԼՕՐԻՆԾ** — Նոյ. 18ին քաղաքիս Հիւանդանոցին մէջ մահանացուն կնքեց Պրն. Մանուկ Գասապեան, իր 50 տարեկան հասակին մէջ։ Մէր ցաւակցութիւնը կը յայտնենք։

\*\*\* Նոյ. 18ի զիշերը աւազակներ Պրն. Ճան Փապումձեանի խանութը կը մտնեն և կը տանին 10 տուրար եւ հագուստեղին։ Մէր խոր ցաւակցութիւնը կը յայտնենք։

Նոյ. 25ին Ֆիլատէլֆիայէն քաղաքս եկաւ Պրն. Մ. Յատկալուրեան՝ հոս հաստատուելով նպատակով։ Բարի գալուստ և յաջողութիւն կը մաղթենք։

### ԼՈՒԽԻՆ

**ՇԵԲԱԿՈ** — Ամէն տարուան պէս, այս տարի ալ Ծօվառցիներ կը պատրաստուին տօնելու «Ծօվառ»ի հրդ տարեգարձը, Դեկտեմբեր 20ին, Յարաթ Երեկոյ, Տէր և Տիկին Կ. Վարդանեանի բնակարանին մէջ։ Բոլոր փափաքողներ աղատ են ներկայ բլլաւ սոյն հաւաքոյթին։

## «ԻՄ ՎԻՇՏԸ»

Ստորեւ կ'արտատղենք մէր հայրենակից Պ. Պետրոսեանի 1924ին հրատարակած «Իմ Վիշտ»ը խորագրով ստանաւորին մէկ քանի տուները, ուր հայ հօր մը տիսույտւուշը կը յաջուին և տարագիր հայորդիի մը խոցուսուած սիրտը կը խօսի եւ կ'ողրայ իր սիրելիներուն անդարձ կուռսուար։

Երբոր մնայք բարեաւ ըսի, Մօրմէս սուր նիշ մը լսեցի, Կընօշս ձեռքէն բնեցի, Զաւակիներըս պինդ գրեցի։

Երսուն երկու տարու էի, Տասը տարուան ամուսնացած, Երկու զաւակ ես ունիէի, Մուրազ ըսես՝ չէի առած։

Չեզի համար երազեցի, Գիշերուայ քունը կորուցի, Ա՛յս, զանոն մինակ քողուցի, Լացի ու համբաս քալեցի։

Ամերիկա նախ որ հասայ, Մէկ քոյր եւ եղբայր մը տեսայ, Ընտանիքս զըրկուեցայ, Աւա՛դ, ձեզի շա'ու կարուցայ։

Ու անոնց հետ ես միացայ, Փոքրիկ սենեակ մը ունեցայ, Ռւկ շատ երկար բնակեցայ, Գիշեր ցորեկ առանձնացայ։

Ա՛յս, անգամ մը ձեզ տեսնէի, Պահիկ մը ձեր հետ ապրէի, Չեզմէկ կարօտը առնէի, Հոգ չէ՛ որ հսկանայի։

\*\*\* Ծօվառի անդամական պտոյտը տեղի պիտի ունենաւ 1931 Յունվարի երկրորդ Կիրակին, այցելութեան վայր պիտի ըլլայ կրանտ Փարքի մէջ նոր հաստատուած իլուր Փլանիքարիւմը։

\*\*\* ՍԱՆ ՅԻԱՆՉԻՍԿՈ — Թէնքսկիվինիկի առթիւ քաղաքս այցելեցին Սէլմայի մէր հայրենակիցներէն Տէր և Տիկին Զադ Սըրըմեան, Տէր և Տիկին Մատղաշեան, Մ. և Մ. Սըրըմեաններ, որոնք հիւրասիրուեցան Տէր և Տիկին Աւետիս Փիլօեանէ, Տէր և Տիկին Ս. Գաբրիէլեանէ, Տէր և Տիկին Կ. Տէր Ստեփանեանէ։ Հիւրերը այցելեցին նաեւ Օքլնստ, ուր եւս հիւրասիրուեցան մէր հայրենակիցներէն Տէր և Տիկին Մանուկ և Պողոս Պօյանձեան եղբայրներուն և Տէր և Տիկին Մարգար Երամեանի կողմէ։ Այցելու հիւրերը տասը օր մեղ մօտ մնալէ յետոյ կրկին վերադան իրենց տեղերը։

**Մ. ՓԱՓԱՃԵԱՆ** ՆԻՒ ԵՌԻՔ — Տեղւոյս մասնաճիւղը եռանդով կը պատրաստուի Ծնունդի առթիւ ծառահանդէս մը սարքելու։

Նոյնէս ուրախալի եւ քաջալերական պարագայ մընէ որ Եռնիւն Սիթիի նորակաղմ մասնաճիւղը պատրաստութեան մէջ սարքելու իր անդրնիկ ձեռնարկը։ Յաջողութիւն կը մաղթենք երկու քոյր մասնաճիւղերուն ալ։

\*\*\* Տէր և Տիկ. Մարթին Կիւլեան մանչ զաւակով մը բաղդաւորուեցան։ Մէր խնդակցութիւնը կը յայտնենք։